

## ԼԵԶՎԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ (գուգադրական վերլուծություն)

ԲԵԼԼԱ ԽՈՋՈՒՄՅԱՆ\*   
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում կատարվում է ռուսերենի և հայերենի դարձվածքների ունիվերսալ թեմատիկ խմբերից մեկի գուգադրական վերլուծություն՝ դրանց միջև համապատասխանություններն ու անհամապատասխանությունները հայտնաբերելու և դրանց պատճառները բացահայտելու նպատակով: Ուսումնասիրության համար հատուկ ընտրված է սումատիկ դարձվածքների թեմատիկ խումբը, քանի որ այն ունի բացահայտ մարդակենտրոն ուղղվածություն, ուստի և լայնորեն ներկայացված է բոլոր լեզուներում: Ուսումնասիրությունն ամբողջությամբ կատարվել է լեզվամշակութաբանության լույսի ներքո՝ կիրառելով գուգադրական մեթոդը: Փորձ է արվել կապ հաստատել ոչ բառային լեզվական նշանների (ոչ վերբալ լեզվաբաղադրիչների) և համապատասխան դարձվածաբանական միավորների միջև: Ուսումնասիրության ընթացքում բավականաչափ ուշադրություն է հատկացվել էթնոլեզվաբանական գործոնին, որը տվյալ դեպքում մեծ դեր է խաղում գուգադրվող միավորների կապը բացահայտելու հարցում: Կոնկրետ նյութի ուսումնասիրությունից եզրակացվում է, որ երկու լեզուներում վերլուծվող միավորների միջև նկատված հակասությունները հիմնականում կապված են ազգային առանձնահատկությունների, մշակութային ավանդույթների և համեմատվող լեզուների լեզվակիրների ազգային մտածելակերպի հետ:

**Բանալի բառեր** – *սումատիզմ, սումատիկ դարձվածք, վերբալ լեզու, ոչ վերբալ լեզու, համապատասխանություններ, անհամապատասխանություններ, խորհրդանիշ, մտածելակերպ, ազգային առանձնահատկություններ, գուգադրական վերլուծություն*

Դարձվածաբանությունը յուրաքանչյուր լեզվի ամենահարուստ և ամենաարտահայտիչ շերտերից է, որի գլխավոր արժեքն այն է, որ, լինելով շատ հակիրճ և սեղմ, հաճախ արտահայտում է բավականին լայն և խորը իմաստ: Կարելի է ասել, որ դարձվածքները հնարավորինս սեղմ բարդ և խորունկ մտքերի ու հույզերի համալիրի «փաթեթավորում են»: Սակայն, ունենալով

\* **Բելլա Խոջումյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ռուսաց լեզվի ամբիոնի դոցենտ

**Белла Ходжумян** – кандидат филологических наук, доцент кафедры русского языка ЕГУ

**Bella Khojumyan** – PhD, Associate Professor at YSU Chair of Russian Language

Էլ. փոստ՝ [bella-khojumyan@rambler.ru](mailto:bella-khojumyan@rambler.ru) <https://orcid.org/0009-0005-6458-3772>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 20.03.2025

Գրախոսվել է՝ 26.03.2025

Հաստատվել է՝ 02.06.2025

© The Author(s) 2025

նման հակիրճ ձև, դարձվածքների «փաթեթավորումը» ճշգրիտ բացելը և մեկնաբանելն ամենևին էլ դյուրին ու պարզ գործ չէ, քանի որ դրանց իմաստը կախված չէ բաղադրիչներից: Բացի այդ՝ նրանք հիմնված են ժողովրդի դարավոր փորձի վրա, և հենց ժողովուրդն է դրանց շունչ տվել՝ օգտագործելով ազգային ավանդույթներն ու սովորությունները: Դարձվածքներում արտացոլվում են ժողովրդի «շունչը, ոգին», ազգամշակութային առանձնահատկությունները: Յուրաքանչյուր ժողովրդի հատուկ է իր աշխարհընկալումը, որն արտացոլվում է լեզվում՝ այնուհետև ստեղծելով ազգային լեզվապատկեր: Իսկ վերջինիս ձևավորման գործում կարևոր դեր են խաղում դարձվածքները, որոնցում զետեղված են ազգային մտածելակերպի և մշակույթի առանձնահատկությունները: Այդ պատճառով էլ դարձվածքները ճիշտ հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է ծանոթ լինել տվյալ ժողովրդի մշակույթին, ավանդույթներին, սովորություններին, ընդունված կարծրատիպերին:

Գերմանացի հայտնի լեզվաբան Վիլհելմ ֆոն Հումբոլդտի առաջ քաշած՝ լեզվի և մշակույթի սերտ կապի հայեցակարգի տեսական հիմունքները [Гумбольдт В. фон 2000] հետագայում զարգացան էթնոլեզվաբանական, լեզվամշակութային և միջմշակութային հաղորդակցման տեսության ոլորտների մի շարք լուրջ ուսումնասիրություններում [Телия 1996, Тер-Минасова 2008, Маслова 2001 и др.]: Որոշ գիտնականներ լեզուն սկսեցին դիտարկել որպես մշակույթ տանող խորհրդանիշ-բանալի [Сенир 1993:262]: Այդ կապակցությամբ Տեր-Մինասովան գրում է. «Լեզուն մշակույթի հայելին է, որում արտացոլվում են ոչ միայն մարդուն շրջապատող իրական աշխարհը, ոչ միայն նրա կյանքի իրական պայմանները, այլ նաև ժողովրդի ինքնագիտակցությունը, նրա մտածելակերպը, ազգային բնավորությունը, ապրելակերպը, ավանդույթները, սովորությունները, բարոյական նորմերը» [Тер-Минасова 2008:14]:

Հայտնի է, որ հաղորդակցման ընթացքում հաճախ օգտագործվում են ոչ վերբալ լեզվի նշաններ, երբեմն էլ առանց վերջինների մասնակցության բանավոր հաղորդակցությունը թերի է թվում: Այլ կերպ ասած՝ ոչ վերբալ նշանները (ժեստերը, դիմախաղը) իրենց զգացմունքային հազեցվածությամբ և արտահայտված պատկերավորությամբ հաճախ նպաստում են վերբալ լեզվով արտահայտված մտքերի ավելի արագ և ճիշտ ընկալմանը: Ահա նման ոչ վերբալ լեզվի նշաններից շատերն էլ ժամանակի ընթացքում տեղ են գտնում դարձվածքներում՝ ստանալով վերբալ լեզվամիջոցների տեսք: Վ. Ն. Տելիան նշում է, որ դարձվածքների՝ որպես լեզվամշակութային նշանների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի խորը ներթափանցելու դրանց լեզվային յուրատեսակություն, գնահատելու դրանց կարևոր դերը հաղորդակցման գործընթացում, նաև բացահայտելու դրանցում թաքնված մշակութային իմաստը, նրանց կապը ազգամշակութային ավանդույթների և կարծրատիպերի հետ: Ըստ գիտնականի՝ «լեզվամշակութային տեսակետից դարձվածքները լեզվի բառապաշարի ամենաինքնատիպ մասն են» [Телия 1993:1]:

Խոսքն ուղեկցող ժեստերն ու դիմախաղը ծանոթ էին դեռ հին աշխարհում՝ իբրև մարդկային տարատեսակ զգացմունքների, հոգեվիճակի, մտքերի արտահայտման զգացմունքային խորհրդանիշներ: Լեզվային արտահայտությունների կազմավորման գործընթացում ակնհայտ մեծ դեր է խաղում մարդկային գործոնը, քանի որ դարձվածքների գերիշխող մասը կապված է մարդու և նրա գործունեության բազմազան ոլորտների հետ: Բացի այդ՝ մարդը շարունակ ձգտում է մարդկային հատկանիշներ վերագրել արտաքին աշխարհի օբյեկտներին, այդ թվում նաև՝ անշունչ: Դեռ Շառլ Բալին նկատել է, որ «մարդկային բանականության հավերժական անկատարությունն արտահայտվում է նաև այն բանում, որ մարդը միշտ ձգտում է շունչ հաղորդել այն ամենին, ինչն իրեն շրջապատում է: Նա չի կարող պատկերացնել, որ բնությունն անկենդան է և անշունչ, նրա երևակայությունն արտաքին աշխարհի բոլոր առարկաներին անդադար վերագրում է սեփական անձին բնորոշ գծեր և ձգտումներ» [Балли III. 2001: 221]:

Սոմատիկ բաղադրիչի լայն կիրառումը դարձվածքների կազմում պայմանավորված է այն բանով, որ սոմատիկ բառերը ցանկացած լեզվի հնագույն շերտերից են և կազմում են լեզվի բառային ֆոնդի միջուկը: Հատկապես հատկանշական է, որ սոմատիկ բառերը մեծ ակտիվություն են ցուցաբերում խորհրդանշային մարմնավորման ոլորտում, քանի որ, ունենալով վառ արտահայտված մարդակենտրոն ուղղվածություն, նրանց հիմնական զանգվածը անմիջականորեն կապված է մարդու հուզական և հոգեբանական վիճակի, ինչպես նաև համապատասխան ժեստային, դիմախաղային և տարատեսակ ծիսական գործողությունների հետ: Սոմատիկ դարձվածքները իրականության տարբեր օբյեկտների, երևույթների և վիճակների անվանման ունիվերսալ միջոցներ են:

Հաշվի առնելով սույն գործոնները՝ հետազոտության համար ընտրվել է հենց սոմատիկ դարձվածքների թեմատիկ խումբը, որը հաճախ ակնհայտորեն կապված է ոչ վերբալ լեզվի նշանների հետ և հանդես է գալիս իբրև վերջիններիս վերբալ հոմանիշ կամ համարժեք:

Վերբալ և ոչ վերբալ խորհրդանշային ծածկագրերը սերտորեն փոխկապված են և մշտապես փոխազդեցության մեջ են, ինչի արդյունքում տեղի է ունենում ժեստերի «դարձվածայնացում», և դրանք տեղափոխվում են անվանական հայեցակետ: Համապատասխան դարձվածքների բաղադրիչ մարմնի մասերի անվանական արտահայտումը և ոչ վերբալ արտահայտման նույն մարմնի մասերը համեմատելիս նրանց միջև բացահայտվում են ինչպես որոշակի նմանություններ, այնպես էլ էական տարբերություններ: Մարմնի մասերին վերաբերող ժեստերին սովորաբար հնարավոր չէ տալ տրամաբանական մեկնաբանություն. դրանք առավելագույնս կապված են տվյալ լեզվամիավորման

Էթնիկական գործոնի հետ, մինչդեռ դարձվածքի կազմում այս կամ այն մարմնի մասի անվանման առկայությունը կարող է ունենալ տրամաբանական հստակ բացատրություն:

Մարդկային զգացմունքները և հույզերը կարելի է դիտարկել որպես մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության իրական գործընթացի արտացոլման յուրատեսակ ձև, իսկ դրանք հաճախ ուղեկցվում են տարատեսակ արտահայտիչ շարժումներով, ինչպիսիք են դիմախաղը, ժեստերը, մարմնի շարժումները, որոնք հաճախ համընկնում են տարբեր լեզվամշակութակիրների շրջանում, քանի որ նման դարձվածքների հիմքում ընկած ոչ վերբալ նշանների որոշակի մասը հայտնի է որպես համամարդկային ժեստեր, և այդ իսկ պատճառով հասկանալի են տարբեր ժողովուրդներին: Օրինակ՝ *մատ թափ տալ* – *погрозыть пальцем* (բարկության ժեստ), *գլխով անել* – *кивнуть головой* (համաձայնության ժեստ) և այլն: Եթե փորձենք ավելի ուշադիր դիտել, ապա բավականին հասկանալի և բնական է այն, որ, անկախ ազգությունից, օրինակ, սրտանց ուրախացող մարդու աչքերը կլորանում և փայլում են, իսկ բարկության ժամանակ մարդը կիստում է հոնքերը, սեղմում ատամները և այլն:

Սոմատիկ դարձվածքների համընկնումը տարբեր լեզուներում կարելի է բացատրել ոչ միայն հույզերի և զգացմունքների արտահայտման համամարդկային գործոնով, այլև համամարդկային փոխառության փաստով, ընդհանուր օրինաչափությամբ, որի արդյունքում առաջանում են ազգակից ունիվերսալ դարձվածքներ: Սոմատիկ դարձվածքների լայն տարածվածությունը տարբեր լեզուներում բնական է, քանի որ նրանց բաղադրիչներից մեկը՝ «սոմատիկ» բառը, ունի փոխաբերման մեծ ունակություն: Սակայն փոխաբերություն ստեղծելիս սոմատիզմների արդյունավետության աստիճանը տարբեր է. մարմնի որոշ մասերի անվանումներ ավելի հազվադեպ են օգտագործվում (*плечо* – *ուի*, *кулак* – *բռունցք*, *дворзаша* – *պառա* և այլն), և հակառակը՝ մյուսները լայն կիրառում ունեն (*голова* – *գլուխ*, *глаз* – *աչք*, *нос* – *քիթ*, *рот* – *բերան*, *язык* – *լեզու*, *рука* – *ձեռք*, *нога* – *ոտք*): Խորքային վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել արդյունավետությամբ աչքի են ընկնում այն սոմատիզմները, որոնց գործառնությունները հստակ են և կարևոր, ինչի պատճառով էլ վերջիններս հեշտությամբ վերափոխվում են:

Սոմատիզմների գործառնությունները, դրանցով արտահայտված հասկացությունները տարբեր ժողովուրդների մեջ հիմնականում համընկնում են, սակայն, դրա հետ մեկտեղ, մեծ դեր ունի ազգային գործոնը, որով հաճախ էլ պայմանավորված է սոմատիկ դարձվածքների իմաստային տարբերությունը տարբեր լեզվակիրների շրջանում: Յուրաքանչյուր լեզվում սոմատիզմները կարող են նորովի կիրառվել՝ պայմանավորված լեզվում ընդունված այս կամ այն խորհրդանշով: Ընդգրկվելով դարձվածքներում որպես բաղադրիչ՝ նրանք «հստակեցնում են» իրենց գործառնությունները, իսկ տվյալ լեզվակիրներն այն ընդունում են որպես իրողություն: Օրինակ՝ Իտալիայում քաջությունը ասոցացվում է

յարդի հետ, իսկ Ֆրանսիայում՝ ստամոքսի: Որևէ այլ էթնիկ խմբի համար նման կապը կարող է թվալ անհասկանալի, անբացատրելի և նույնիսկ անհեթեթ: Ահա թե ինչու շատ դարձվածքներ անհնար է բառացի թարգմանել՝ անկախ այդ լեզուների ազգակցականության և նրանցում ներառված սոմատիզմների պարզության ու հստակության աստիճանից: Այդ տեսանկյունից հնարավոր է թվում զուգահեռ անցկացնելը դարձվածաբանության և պոեզիայի միջև: Ո՞րն է պատճառը, որ բնօրինակը և թարգմանությունը տարբեր ձևով են ընկալվում: Ինչո՞ւ է բնօրինակը միշտ հնչում ավելի մեղեդային, իսկ թարգմանության մեջ զգացվում է աններդաշնակություն: Կարծում ենք՝ պատճառը տվյալ լեզվի ազգային առանձնահատկություններն են, ազգային գուներանգը, որը ոչ ոք չի կարող զգալ, հետևաբար և արտահայտել այնքան լավ, դիպուկ և վառ, որքան այն մարդը, որի համար այդ լեզուն հարագատ է: Նույնիսկ շատ արհեստավարժ թարգմանությունը հաճախ թերի է թվում հենց ազգային կոլորիտի պակասության պատճառով: Ահա թե ինչու բոլոր ժամանակների հայտնի թարգմանիչներն աշխատում էին չթարգմանել այն բառերն ու արտահայտությունները, որոնց ոճային համարժեքները դժվար կամ անգամ անհնար է գտնել թարգմանության լեզվում: Օրինակ՝ զուգադրենք Սայաթ-Նովայի քառատողը նրա ռուսերեն թարգմանության հետ.

*Աշխարհումս ախ չիմ քաշի,  
Քանի վուր ջան իս ինձ ամա,  
Անմահական ջրով լիքը  
Օսկե փնջան իս ինձ ամա:*

*Я в жизни вздоха не издам,  
Доколе джан ты для меня,  
Наполненный святой водой  
Златой пинджан ты для меня.*

Այն, որ թարգմանիչը չի թարգմանել «ջան» բառը, խոսում է նրա վարպետության մասին, քանի որ ոչ մի այլ լեզվում հնարավոր չէ գտնել նման բառ կամ արտահայտություն, որը կարտահայտի բնօրինակի ամբողջ խորությունը, քանի որ միայն հայը կարող է ճիշտ հասկանալ և զգալ այդ կարճ բառի խորքային իմաստը և զգալ նրա անհուն «ներքին ջերմությունը»:

Գրեթե նույնը տեղի է ունենում դարձվածաբանության ոլորտում. եթե փորձենք հայերեն թարգմանել ռուսական դարձվածքը, կունենանք ազգային առանձնահատկության և ոճային երանգավորման ակնառու կորուստ, իսկ հաճախ էլ նման թարգմանությունն աչքի է ընկնում եթե ոչ զգալի, ապա որոշակի անհեթեթությամբ:

Ինչպես ցանկացած լեզվի միավոր, դարձվածքները գործածվելիս ենթարկվում են ընդունված լեզվային նորմերին և ըստ դրանց՝ ամրագրված են լեզվի դարձվածային համակարգում, սակայն խոսակցական լեզվում երբեմն կարող են ընդունել այլ ձև: Տրամաբանական է մտածել, որ ցանկացած շեղում նորմից պետք է համարվի ոչ նորմատիվ գործածություն, սակայն այս դեպքում, երբ խոսքը գործածման տարբեր ոլորտների մասին է՝ լեզվի և խոսքի, մեր մոտեցումը պետք է տարբերվի: Խնդիրն այն է, որ խոսքի սահմանները բավականին

լայն են և շարժուն. այստեղ կարող են տեղ գտնել դարձվածքի անհատական կամ հեղինակային օգտագործում, նրա նորմատիվ ձևի փոխակերպում, տարատեսակ փոփոխություններ դարձվածքում և այլն: Կարևոր է նաև նշել, որ դարձվածքի նշված փոխակերպումները ծառայում են որոշակի նպատակների. կոչված են նոր երանգ մտցնելու, հաղորդելու լրացուցիչ կոլորիտ կամ նշվում են որպես խոսակցական և այլն: Եվ անհապարգվում է, որ նման շեղումները չեն կարող որակավորվել որպես դարձվածքի ոչ նորմատիվ օգտագործում: Սակայն երբեմն դարձվածքում տեղ գտած փոփոխությունները կարող են աղավաղել և անգամ փոխել դրա իմաստը, ուստի այդ դեպքում անհրաժեշտ է պարզել փոփոխությունների բնույթն ու նպատակը: Բացի այդ՝ դարձվածքի սխալ օգտագործումը խոսքում կարող է բխել լեզվին չտիրապետելուց կամ դարձվածքի իմաստը չհասկանալուց:

Ուսումնասիրվող թեմատիկ խմբի դարձվածքների զուգադրական վերլուծության ընթացքում ակնհայտորեն պարզ է դառնում, որ ռուսերենի և հայերենի նշյալ տիպի դարձվածքների հիմնական միավորող գործոնը իմաստակառուցվածքային միատիպությունն է: Զուգադրվող միավորումների համարժեքությունը երբեմն նաև կարող է առաջանալ սոմատիկ բաղադրիչի փոխարինման հետևանքով: Օրինակ՝ ժամանակակից հայերենում հայտնի է «թեթև ոտք» դարձվածքը [Սուքիասյան Ա., Գալստյան Ս., 1975, Բեղիբյան Պ., 2011], որն իմաստով համարժեք է ռուսերենի «легкая рука» դարձվածքին: Այս դեպքում տրամաբանական վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ եթե ռուսական լեզվաիրականության մեջ հաջողությունը կապվում է ձեռքի հետ, ապա հայերենում՝ ստորին վերջույթի: Հարկ է նշել, որ բառարաններում արձանագրված է նաև ռուսերենի «легкая рука» սոմատիկ դարձվածքին համարժեք «թեթև ձեռք» դարձվածքը, որն ամենայն հավանականությամբ պատճենված է ռուսերենից:

Հետագա վերլուծության ընթացքում զուգադրվող դարձվածքների միջև բացահայտվում են տարատեսակ անհամապատասխանություններ:

Հոդվածում առանձնացվել են ռուսերեն և հայերեն սոմատիկ դարձվածքների միջև առկա անհամապատասխանության առավել հետաքրքիր դեպքեր, որոնց պատճառը, մեր կարծիքով, պետք է փնտրել տվյալ լեզուների ազգային առանձնահատկության և լեզվակիրների աշխարհընկալման մեջ:

Սոմատիկ դարձվածքներն իրենց կազմում պարտադիր ներառում են սոմատիկ բաղադրիչ՝ մարդու դեմքի կամ մարմնի մասեր անվանող բառ, որը համընկնում է բոլոր լեզուներում: Օրինակ՝ մարդու վերին վերջույթներն անվանելու համար հայերենում օգտագործվում է «*ձեռք*» բառը, ռուսերենում՝ «*рука*», տեսողական օրգանի անվանման համար հայերենում օգտագործվում է «*աչք*» բառը, ռուսերենում՝ «*глаз*» և այլն: Անհերքելի է, որ մարմնի նշված մասերը երկու լեզուներում էլ ունեն նույն գործառնությունը և տարբերվում են միայն իրենց

անվանումներով, որոնք համապատասխանաբար կազմված են յուրաքանչ-յուր լեզվի կանոններով:

1. Տրամաբանորեն կարելի է ենթադրել, որ գուգադրվող դարձվածքներում պարտադիր է սոմատիկ բաղադրիչի ատկայությունը, մինչդեռ վերլուծության արդյունքում պարզվում է, որ ռուսերենի և հայերենի համարժեք դարձվածքները միմյանցից տարբերվում են հենց սոմատիկ բաղադրիչով՝ պահպանելով սակայն հոմանիշությունը: Օրինակ՝

*зарубить себе на носу – ականջին օղ անել* - ( ռուսերենում՝ *нос*, հայերենում՝ *ականջ*)

*мизинца не стоит – եղունգը չարժե* (ռուսերենում՝ *мизинец*, հայերենում՝ *եղունգ*)

*с глазу на глаз – երես առ երես* (ռուսերենում՝ *глаз*, հայերենում՝ *երես*)

*вверх ногами – գլխիվայր* (ռուսերենում՝ *нога*, հայերենում՝ *գլուխ*):

*с ног до головы – ոտքից գլուխ:*

Հատկապես ուշագրավ են վերջին երկու օրինակները, որոնցից առաջինում թեև գուգադրվող լեզուներում օգտագործված են տարբեր սոմատիզմներ, բայց դարձվածքների իմաստային համարժեքությունը լիովին պահպանված է պարզ տրամաբանությամբ. երկու դեպքում էլ ստանում ենք նույն պատկերը՝ գլուխը ներքևում, ոտքերը՝ վերևում: Վերջին օրինակում երկու լեզուներում էլ օգտագործված են նույն սոմատիկ բաղադրիչները, բայց հակառակ հերթակա-նությամբ, ինչը ևս որևէ կերպ չի խոչընդոտում դարձվածքի ճիշտ ընկալումը, քանի որ այստեղ խոսքը նայելու, զննելու, ուսումնասիրելու մասին է և լայն իմաստով նշանակում է «ամբողջությամբ», իսկ թե ինչպես է դա կատարվում՝ վերևից ներքև (ռուսերենում), թե հակառակը (հայերենում) կարևոր չէ, որով-հետև այս օրինակում ևս ակնհայտ է հայերեն և ռուսերեն դարձվածքների լիակատար համարժեքությունը. երկուսում էլ բացահայտ երևում է ամբողջությ-յան իմաստը:

2. Բացի սոմատիկ բաղադրիչը այլ սոմատիկ բաղադրիչով փոխարինելուց՝ գուգադրվող դարձվածքների անհամապատասխանության պատճառ կարող է լինել մեկ այլ երևույթ, այն է՝ երբ սոմատիկ դարձվածքի հոմանիշը կամ հա-մարժեքը մյուս լեզվում ևս ներկայացված է դարձվածքով, բայց ոչ սոմատիկ: Օրինակ՝

*бить себя в грудь – իրեն ճղել*

*сложить руки – մի կողմ քաշվել:*

3. Զուգադրվող դարձվածքների միջև ավելի լուրջ անհամապատասխա-նության պատճառ կարող է լինել լեզվի մակարդակների տեղաշարժը, այլ կերպ ասած՝ երբ ռուսերեն դարձվածքի հայերեն համարժեքն արտահայտված է ոչ թե դարձվածքով, այլ լեզվի ուրիշ մակարդակների միավորներով՝ բառով

(բառագիտական մակարդակ) կամ նկարագրության միջոցով (շարահյուսական մակարդակ): Օրինակ՝

*тугой на ухо – վատ լսող, ни в зуб(ногой) – բան չիմանալ:*

4. Զուգադրվող լեզուների որոշ սոմատիկ դարձվածքների միջև նկատվող անհամապատասխանությունները կարող են նաև պատմականորեն պայմանավորված լինել: Օրինակ՝ ռուսական սոմատիկ դարձվածքներից շատերը, որոնք լայնորեն տարածված են, հայերենի դարձվածքային համակարգում չեն արտացոլվել: Տվյալ դեպքում մենք հակված ենք ենթադրելու, որ այս երևույթի պատճառը կարող է լինել նման իրողությունների բացակայությունը հայկական իրականության մեջ: Օրինակ՝ ռուսերենի *косая сажень в плечах* դարձվածքի հիմքում որպես բաղադրիչ օգտագործված է հին ռուսական չափման միավորի անվանումը, որն ընդունելի, ուստի և ընկալելի է միայն տվյալ լեզվակիրներին:

Այսպիսով, զուգադրվող ռուսերեն և հայերեն դարձվածքների միջև առկա անհամապատասխանությունները հիմնականում բխում են ազգային առանձնահատկություններից, տվյալ լեզվակիրների աշխարհընկալումից և լեզուների անցած պատմական տարբեր ուղիներից:

Ռուս-հայերեն դարձվածքների բառարաններում ռուսերեն սոմատիկ դարձվածքի հայերեն համարժեքի բացակայության դեպքում երբեմն առաջարկվում է դրա բառացի թարգմանությունը, ինչը համարվում է լեզվի դարձվածաբանական նորմերի որոշ չափով խախտում, քանի որ նման տարբերակը չի կարող սպառիչ պատկերացում տալ տվյալ դարձվածքի բնույթի մասին՝ շրջանցելով ռճային այն կարևոր երանգավորումը, որը հաճախ ապահովում է նաև դարձվածքի իմաստը: Արդյունքում թարգմանված դարձվածքը կորցնում է բուն իմաստը կամ ստանում է ազատ բառակապակցության ձև, որը կորցնում է կապը թարգմանվող դարձվածքի հետ: Օրինակ՝ *иметь голову на плечах* – *ուսերի վրա գլուխ ունենալ:*

Ուսումնասիրության ընթացքում հաջողվել է բացահայտել բազմաթիվ դեպքեր, երբ ռուսերեն սոմատիկ դարձվածքը հայերենում ունի մեկից ավելի դարձվածային համարժեքներ՝ տարբեր սոմատիկ բաղադրիչներով, որտեղ, որպես կանոն, նման համարժեքներից մեկը միշտ առանձնանում է լեզվում օգտագործվելու հաճախականությամբ և ավելի լայնորեն է կիրառվում խոսքում: Օրինակ՝ համեմատենք՝

*ни в одном глазу – տեսքից չերևալ, պետքը չլինել, վեջը չլինել, բանի տեղ չդնել*

*высасывать из пальца – օղից վերցնել, իրենից հնարել, մատից հոտ քաշել*  
*пальчики оближешь – մատներդ հետը կուտես, համը բերանդ կմնա, համից չես կշտանա* [օրինակները՝ Ходжумян Б. 2007]:

Բերված օրինակները խոսում են ժամանակակից հայերենի դարձվածքային համակարգի հարստության մասին:

Ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքների զուգադրական վերլուծությունը, որի ընթացքում զուգադրվող միավորների միջև բացահայտվում են որոշակի համապատասխանություններ և տարատեսակ անհամապատասխանություններ, հանգեցնում է այն եզրակացությանը, որ վերլուծվող միավորների բնույթի մասին ավելի ստույգ պատկերացում ստանալու համար թերևս հարկավոր է հայացքն ուղղել դեպի էթնոլեզվական գործոն, որն էլ հաճախ կանխորոշում է տարբեր լեզուների համարժեք լեզվամիավորների զարգացման տարբեր ուղիները: Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ միջմշակութային հաղորդակցման ընթացքում, որը ներառում է հաղորդակցման վերբալ և ոչ վերբալ ձևերի միասնությունը, տեղի է ունենում մշակութային փոխազդեցություն, որի արդյունքն է լինում տարբեր մշակութակիր ազգերի փոխընկալումը և համապատասխանաբար՝ նրանց լեզուների փոխհարստացումը:

**БЕЛЛА ХОДЖУМЯН – *Взаимосвязь языка и национальной культуры (сравнительный анализ)*.** – Статья посвящена сопоставительному анализу русских и армянских соматических фразеологизмов с целью выявления соответствий и расхождений между ними. Для исследования специально выбрана именно указанная тематическая группа фразеологизмов, поскольку она имеет очевидную антропоцентрическую направленность и по этой причине широко представлена во всех языках. Исследование полностью проведено в рамках лингвокультурологии с применением сопоставительного метода.

Сделана попытка установить связь между невербальными языковыми символами и соответствующими фразеологизмами. На основе исследования конкретного материала делается вывод, что наблюдаемые несоответствия между анализируемыми единицами в двух языках в основном связаны с национальным своеобразием, с культурными традициями и национальным менталитетом носителей сопоставляемых языков.

**Ключевые слова:** *соматизм, соматический фразеологизм, вербальный язык, невербальный язык, соответствия, расхождения, символ, национальная специфика.*

**BELLA KHOJUMYAN – *Relationships with Language and National Culture (comparative analysis)*.** – The article is devoted to the comparative analysis of Russian and Armenian somatic phraseological units with the purpose of identifying the correspondences and differences between them. An attempt was made to establish a connection between them. An attempt was made to establish a connection between non-verbal language symbols and the corresponding phraseological units. The mentioned thematic group of phrases was specially chosen for the study, because it has an obvious human-centered orientation and for that reason is widely represented in all languages. The study was completely carried out under linguistic and cultural studies, applying the comparative method.

Based on the study of specific material, we come to the conclusion that the observed discrepancies between the analyzed units in the two languages are mainly associated with national identity, cultural traditions and the national mentality of the speakers of the compared languages.

**Key words:** *somatic word, somatic phraseological unit, verbal language, non-verbal language, correspondences, discrepancies, symbol, national specificity.*

### Գրականության ցանկ

- Ղազարյան, Հ. (2012): Փոխաբերական վերախմաստավորումը մարմնի մասերի անվանումներով դարձվածքներում // Լրաբեր հասարակական գիտությունների, №1: (Ghazar'yan, H. (2012). *P'vokhaberakan veraimastavorumē marmni maseri anvanumnerew darzvats'k'nerum* // *Lraber hasarakakan gitut'yunneri*, №1).
- Օլյան, Ա. (2016): Բառապաշարի թեմատիկ դասակարգումն ու «մարմնի մասերի» իմաստային խումբը լեզվաբանական հետազոտության առարկա // Հայագիտական հանդես, №31 (1): (Olyan, A. (2016). *Barrapashari tematikan dasakargumēn u "marmni maseri" imastayin khumpē lezvabanakan hetazotut'yan ararka* // *Hayagitakan handes*, №31 (1)).
- Балли, Ш. (2001). Французская стилистика. М.: Эдиториал УРСС, 394 с. (Balli, Sh. (2001). *Frantsuzskaya stilistika*. М.: Editorial URSS, 394 s.).
- Маслова, В. А. (2001). Лингвокультурология. М.: Изд. Центр «Академия», 208 с. (Maslova, V. A. (2001). *Lingvokul'turologiya*. М.: Izd. Tsentr "Akademiya", 208 s.).
- Новый язык телодвижений (2007). М., 416 с. (Novyy yazyk telodvizheniy (2007). М., 416 s.).
- Русецкая, И. (2012). Концептуализация культурных стереотипов душа и тело в русской соматической фразеологии (с привлечением литовских параллелей). М., 231 с. (Rusetskaya, I. (2012). *Kontseptualizatsiya kul'turnykh stereotipov dusha i telo v russkoy somaticheskoy frazeologii (s privlecheniem litovskikh paralleley)*. М., 231 s.).
- Сепир, Э. (1993). Избранные труды по языкознанию и культурологии. М.: Прогресс, 656 с. (Sepir, E. (1993). *Izbrannyye trudy po yazykoznaniiu i kul'turologii*. М.: Progress, 656 s.).
- Современный язык жестов (2007). Москва-Минск. (Sovremennyy yazyk zhestov (2007) Moskva–Minsk).
- Телия, В.Н. (1993). Культурно-национальные коннотации фразеологизмов // Славянское языкознание. М.: Наука, 308 с. (Teliya, V. N. (1993). *Kul'turno-natsional'nye konnotatsii frazeologizmov* // *Slavyanskoe yazykoznanie*. М.: Nauka, 308 s.).
- Телия, В. Н. (1996). Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты//Языки русской культуры. М., 281 с. (Teliya, V. N. (1996). *Russkaya frazeologiya. Semanticheskii, pragmaticheskii i lingvokul'turologicheskii aspekty* // *Yazyki russkoy kul'tury*. М., 281 s.).
- Тер-Минасова С. Г. (2008). Язык и межкультурная коммуникация. М.: Слово, 624 с. (Ter-Minasova S. G. (2008). *Yazyk i mezhkul'turnaya kommunikatsiya*. М.: Slovo, 624 s.).
- Բառարաններ**
- Բեդիրյան, Պ. Ս. (2011): Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան: Եր.: (Bediryan, P. S. (2011). *Hayeren darzvats'k'neri andratsak bacatrakan barraran*. Yer.).
- Ղազարյան, Հ. (2010): Մարմնի մասերի անվանումներով հայերեն-ռուսերեն-անգլերեն դարձվածքների բառարան: Եր.: (Ghazar'yan, H. (2010). *Marmni maseri anvanumnerew hayeren–ruseren–angleren darzvats'k'neri barraran*. Yer.).
- Սուքիասյան, Ա. Մ., Գալստյան, Ս. Ա. (1975): Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան: Եր.: (Sukiasyan, A. M. (1975). *Galstyan S. A. Hayots' lezu'i darzvats'abanakan barraran*. Yer.).
- Русско-армянский фразеологический словарь (1975). Под ред. Р. Л. Мелкумяна и П. М. Погосьяна. Ер.: ЕГУ. (Russko-armyanskiy frazeologicheskii slovar (1975). Pod red. R. L. Melkumyana i P. M. Pogosyana. Er.: EGU).
- Ходжумян, Б.С. (2007). Русско-армянский словарь-справочник соматических фразеологизмов. Ер., изд-во ЕГУ, 176 с. (Khodzhumyan, B. S. (2007). *Russko-armyanskiy slovar'-spravochnik somaticheskikh frazeologizmov*. Er., izd-vo EGU, 176 s.).